ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/1513 «21» 06 2016 թ.

Ձեր

2/3171-16
22.06.16թ.

Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպան
պարոն Ա. ԹԱԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թաթոյան

Ձեր կարծիքին է ուղարկվում «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Խնդրում եմ նախագծի վերաբերյալ Ձեր նկատառումները հնարավոր սեղմ ժամկետում ուղարկել ՀՀ ոստիկանություն:

Առդիր՝ «4» թերթ:

/ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Իրավաբանական վարչություն,
կատարող՝ Ա. Կոչուբան,
հեռ՝ 59-69-18

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՏԻՑ թիվ 11-184
«22» 06 2016թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ոսաիկանության կողմից մարդուն խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելը, նրա ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը խախտելը պատժվում է օրենքով:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշառնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում նոր խմբագրությամբ շարադրված ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածում հստակ ամրագրվել է նաև անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը: Մասնավորապես, 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, նասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հայասաանի Հանրապեաության կառավարության 2016 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու արդյունքում ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը հաստատելու մասին» թիվ 359-Ա որոշման հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ ստհմանադրական նորմերին համապատասխան՝ փոփոխություններ պետք է կատարվի նաև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նտխագծով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել «Ոսահիկանության մասին» Հայաստանի Հանրապեաության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, համապատասխան մասերը՝ ոսահիկանության կողմից մարդու ֆիզիկական և հոգեկան անձռնմխելիության խախտման արգելքը ամրագրելու, անձի իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակումների հիմքերը, ինչպես նահ օրենքում առկա ձհակերպումները ՀՀ նոր Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագիծը մշակվել է ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության կողմից:

6.Ակնկալվող արդյունքը.

Օրինագծի ընդունմամբ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կհամապատասխանեցվի ՀՀ նոր Սահմանադրությանը, ինչպես նաև կապահովվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի 6-ի «ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու արդյունքում ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը հաստատելու մասին» թիվ 359-Ա որոշման հավելվածի 2-րդ կետի կատարումը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների եվ ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին

Օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ